

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 բուլլի կէս տարեկան 6 բուլլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мелкъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է մինչ լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻՆԻՍԻՏԻԻՆ

Ներքին Տեսչութիւն. Վեցեցիա. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՉԱԳԻՆ. Արտաքին
լուրեր.—ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ: Մանրանկար.—ՀԵ-
ՌԱԳԻՐԸ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՆԻՍԻՏԻՆ. Միջնորդներ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՉԱԳԻՆ

Վ Ե Ն Ե Ց Ի Ա

(Յիշողութիւններ *)

Ես վեցեցի ուղեւորով Վեցեցիա, որպէս զի
մի կողմից կարողանամ կազմել մտայնութիւնս,
որը խախտված էր նախընթաց տարվայ
համալսարանական պարապմունքներիցս. իսկ
միւս կողմից կարողանամ շարունակել հայե-
րէնով պարապել:

Այսպիսով Վիեննայ թողնելով եւ տեղափոխ-
վեցայ Վեցեցիա:

Ես Վեցեցիա արդէն ճանաչում էի. մի եր-
կու երեք տարի արանից առաջ եւ այցելել էի
այդ քաղաքը, միայն այդտեղ մի երկու ամիս...

Անցել էր մի քանի օր մի Վեցեցիա գալուց
յետոյ, ես սենեակ էի վարձել Սան-Մարկո
հրապարակից ոչ հեռու եւ բուն վեցեցիացու
պէս օրվայ մեծ մասը անց էի կացնում բաց
օդում, Piazza San Marco հրապարակի կաթի-
ներից մինի առջեւ նստած, լրագիր կարդալով
եւ ազատութեամբ ներշնչելով ծովային մեղմ
եւ անողջարար օդը:

Վերջապէս ժամանակն անցնում էր, պէտք
է սկսէի պարապմունքներս: Եւ ահա մի գե-
ղեցիկ առաւօտ վարձում եմ Piazzetta առված
ծովեզրեայ հրապարակից ոչ հեռու, ծովի ա-
յլքների վրա ճոճվող նաւակներից միս եւ ճա-
նապարհ եմ ընկնում դէպի San-Lazaro կղզին,
Միջիթարեանների միաբանութեան վանքը:

Նաւավար (գոմարի) թիւակներով ա-
նուանում էր ինձ այն բոլոր կղզիները, որոնց
մօտով անցնում էր մեր նաւակը... Ահա San-
Servolo կղզին, որի վրա գտնվում է խելա-
գարների համար մեծ հիւանդանոցը, ահա այ-
գիներով ճածկված Լիքո կղզին, ահա վերջա-
պէս կանաչազարդ San-Lazaro կղզին, որի
բոլոր շինութիւնները կարմիր աղիւսներից են
շինված...

*) ՎՇԽԻ, 1890, № 49—50: Բերում ենք կտորներ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԻԹԱՐԵԱՆՆԵՐ

I

Երկու հարիւր տարի մեզանից առաջ, Կ.
Պօլսի հայ հասարակութիւնը արեւմտիկ ծովի
էր նման: Տիրում էր մեծ իրարանցում.
ահն ու երկիւղը պատել էր ամենքին: Ոչ ոք
չէր կարող ապահով լինել, թէ վաղը նրա ա-
ռաջ չի կանգնի բազմաթիւ դժբաղդութիւն-
ներից մէկը—կամ բանտ նետվել, կամ կախա-
ղան բարձրանալ, կամ աքսոր գնալ: Գոր-
ծում էր մի հսկայական եռանդ, որ ոչ ցերեկ
էր ճանաչում, ոչ գիշեր: Հայը ամենայն յօժա-
րութեամբ հանում էր իր հարստութիւնները,
չափ անգամ իր վերջին գրօններն էր ծախ-
սում՝ բոլորովն ընդունելով քաղաքի բոլոր
ածելու համար:

Պատմութիւնը այդ զարմանալի եռանդուն
գործունէութեան մօտենում է գլուխը: Իր
քաղաքական դժբաղդ վիճակը բարեփոխ-
համար չէր հայ ժողովուրդը այդքան արին
ու քրտինք թափում: Թիւրքական անտանելի
ստրկութիւնից ազատվելու համար չէր նա
խմբերով բանտերը դիմում, աքսորվում, նա-
հատկութեամբ հրապարակով. ոչ էլ խոր ագի-
տութեան օտակարի խաւարից դուրս գալու եւ
մատուր վերածնունդի արշալոյսը ողջունե-
լու համար էր նա վառնում իր հարստու-
թիւնները այնքան մեծ յօժարութեամբ:

Նաւավար ինձ հետ անդադար խօսելով եւ
ամեն բան բացատրելով, առիթ չը բաց թողեց
օրինաւոր կերպով հայտնելու հոգեւորականնե-
րին: Եթե անանական թաւականներում սաստիկ
հակակրեական ոգի էր տիրում ամբողջ Իտա-
լիայում. ստորին ամբոխի եւ հոգեւորականնե-
րի մէջ ամբողջ Իտալիայում ընդհարումներ էին
պատահում: Ես ինքս ներկայ էի Վեցեցիայում
հետեւեալ դէպքին. Սան-Մարկո հրապարակի
վրա, մի տօնի օրը, երբ կաթոլիկ հոգեւորա-
կանութիւնը թափու էր կազմել, ամբոխը,
հրապարակի վրա երկու խիտ շարք կազմելով
ամեն տեսակ հայոյանք էր թափում անցնող
հոգեւորականութեան վրա. վերջը թէ ամբոխի
միջից եւ թէ հրապարակի երկու կողմը գտնվող
կաթոլիկներից՝ սկսեցին քարեր արձակել զգա-
տաւորված քահանայների վրա, այնպէս որ պո-
լիցիան ստիպվեց միջամտել ընդհարմանը եւ
ազդուի անողններից շատերին կալանաւորեց:
Ես գիտէի որքան կատաղած, զայրացած է ի-
տալական ամբոխը կաթոլիկ հոգեւորականու-
թեան դէմ եւ ինձ հետաքրքրում էր իմանալ
ամբոխի մարդու կարծիքը հայ կաթոլիկ
միաբանութեան մասին...

—Ձե, gli Armeni—բացատրութիւն են, պա-
տասխանեց նաւավարս, ամենքն էլ նրանց
յարգում են... Նրանք ուսումնական մարդիկ
են, նրանք ոչ ոքին չեն խաբում ու չեն հա-
րստահարում:

Շատ անգամ նոյն նիւթի վրա խօսելով, ես
միակերպ պատասխան էի ստանում ծանօթ
իտալացիներից: Ամենքը ասելով ասում էին
հոգեւորականներին, իսկ հայ Միջիթարեան
միաբանութիւնը ընդհանուր յարգանք էր վա-
յելում Վեցեցիայում:

Սուրբ-Ղազարի վանքը շատ անգամ նկարա-
գրված է եղել թէ օտար եւ թէ հայոց գրակա-
նութեան մէջ: Այդ վանքը մտնողը բոլորովն
ուրիշ տպաւորութիւն է ստանում, քան թէ
Վիեննայի Միջիթարեանների միջնադարեան
վանքն այցելողը Վեցեցիայում իմ կացութեան
ժամանակ եւ փորձեցի հաղորդել իմ տպաւո-
րութիւնները վանքի մասին Վեցեցիական Այ-
խարհի ընթերցողներին: Վերին աստիճանի
հիւրասէր, սիրալիկ ընդունելութիւնը, արեւ-
դաների կիրթ վարժուները, նրանց լուսաւոր,
առաջադէմ հայեացքները, վանքի գեղեցիկ
սարք ու կարգը, հարուստ տպարանն ու գրա-
դարանը, եկեղեցու մէջ բուն հայկական ա-
րարողութիւնների անխախտ պահպանելը, վեր-

Ոչ Այդ անագին իրարանցումը մի անխա-
նդարարական պատերազմ էր, դաւանութիւն-
ների մի անաւոր ընդհարում: Հայը հային կե-
ղեքում էր, որովհետեւ մէկը լուսաւորական
էր, միւսը կաթոլիկ: Եղբայրը եղբոր դէմ, մի-
մեկին դահիճ, միմեանց դժբաղդութեան աչք
տնկած. կռիւներ ընտանեկան յարկերի տակ,
զրնգում էին շղթաները մութ բանտերի մէջ,
աքսորվողների, թիւրքաւերներում տանջվողների
հեծեծանքները խաւար ու փութուր ժամանակի
համար ոչինչ էին...

Ճակատագրին հաճելի եղաւ հէնց այդ ող-
բալի ժամանակում մի լուսաւոր օկզնաւոր-
թիւն զենի դժբաղդ հայ ժողովուրդի մէջ: 1701
թականի սեպտեմբերի 8-ին, երբ տօնվում է
Աստուածածնի ծնունդը, 25 տարեկան մի հայ
վարդապետ, որ կաթոլիկ էր. եւ, հալածանքնե-
րից փախչելով, թափվել էր Կ. Պօլսում զբոս-
նող վրապուցին վարդապետների վանքի մէջ,
հաւաքեց իր աշակերտներին եւ յայտարարեց
նրանց, թէ ինքը հիմնում է մի կրօնական միա-
բանութիւն:

Երիտասարդ վարդապետը Միջիթար Սեբաս-
տացին էր:

Ահա այդ օրվայ երկու հարիւր ամեայ տա-
րեդարձն է, որ այսօր, օգոստոսի 26-ին,
տօնվում է Վեցեցիայի ա. Ղազար վանքում:

II

Միաբանութիւնը կրօնական էր եւ ունէր
վարդապետական-քարոզչական նպատակ: Ինչ
լինէր անխախտ, քարոզչական հալածանք-
ների այդ շրջանը, Միջիթարը գուցէ կը մնար հայ

շապէս եւ խնամքով մշակված խաղողի այգին
ու բանջարանոցը.—այդ բոլորը վերին աստի-
ճանի միջիթարական տպաւորութիւն էր գոր-
ծում հայ այցելողի վրա: Խաղողութիւն, տո-
կուն աշխատանք, անձնուէր սէր դէպի հայ-
րենիքի յիշատակները եւ մի եւ նոյն ժամա-
նակ եւրօպական կերթ վարժունքն ու լայն
ժամանակակից հայեացքներ ամեն հարցերի
վրա,—ահա Վեցեցիայի սուրբ հայրերի յատ-
կանիչը: Իր ժամանակին ես յայտնել էի Վեց-
ցիական Այխարհում իմ հայեացքները եւ սուրբ
հայրերի ուղղութեան պակասաւոր կողմերի
մասին, այն է նրանց անկաւարժական սխալ
եւ անժամանակակից ուղղութեան մասին: Նը-
րանք ունեն Վեցեցիայում երկու դպրոցներ՝
միւսը կղզում,—վանական դպրոց է, իսկ միւսը
քաղաքում,—մի տեսակ միջնակարգ դպրոց,
մի տեսակ լիցէյ է, որը այն ժամանակ կրում
էր «Բաֆայէլեան» անունը, իսկ այժմ միաց-
վելով Պարիզից տեղափոխված Մուրադեան
դպրոցի հետ, կրում է «Բաֆայէլեան-Մուրա-
դեան» անունը:

Կղզու վրա գտնվող վանական դպրոցը գոր-
ծեց ինձ վրա, ինչպէս եւ նկարագրել էի Վեց-
ցիական Այխարհում, անսխալ տպաւորութիւն.
Երեխաները հիւանդանոց, նիհար, գեղնած, օտը-
կացած, բթաբեր դէմքերով... Ներկայ գտնվե-
լով դպրոցի տարեկան հանդէսին, համոզվեցայ
թէ դպրոցում տիրում է մեռած գրաբարակա-
նութիւնն ու հնացած օրօրաստիական մեղմնող
ոգին...

Բայց մի բան անուրանալի է, այդ այն է, որ
Վեցեցիայի Միջիթարեանները սիրահարված են
իրանց հայրենիքի յիշատակների վրա... Ուր եւ
նայեա, ուր եւ գնա, այդ փոքրիկ աշխարհը,
Սուրբ-Ղազարի կղզին յիշեցնում է քեզ հայրե-
նիքը: Հայոց գրքեր, հայոց ձեռագիրներ, Հա-
յաստանի տեսարանների պատկերներ, եկեղե-
ցում հին հայկական պարզ ծիսակատարու-
թիւն, այցու մէջտեղ մի մեծ աւաղան Վանի
ծովակի ձեւով շինված...

Արեւմտեանը սիրով ընդունեցին ինձ...

Սրանց հետ խօսելով, մարդ մոռանում է թէ
նրանք կաթոլիկ են, մոռանում է նոյն իսկ թէ
արեւմտեան են,—այն աստիճան լուսաւորված
մարդիկ են նրանք: Մարդ նոյն իսկ առաջին
րօպէից ստիպված է նայել նրանց վրա, որպէս
լուսաւորված աշխարհականներից բաղկացած
համեստ մի ուսումնական ընկերակցութեան
վրա... Միայն հարկաւոր չէ խօսել ու վիճել

ժողովուրդի մէջ, հայկական հողի վրա եւ, հա-
ւանական է, կը խեղդէր մեր աղքատ ու
անհրապարակ իրականութեան մէջ: Բայց հայա-
ծանքները փախչելի Միջիթարին Կ. Պօլսից,
հետադարձ նրան դէպի արեւմուտք: Այդ կող-
մից մենք չորհակալ պիտի լինենք հայածոյ-
ներից, որքան էլ օտ ցաւալի լինի:

Արեւմտեանը հաստատվել անասելի զը-
ծուարութիւններ ունէր. մօտ 15 տարի Մի-
թարը ապրում էր իր միաբանների հետ Յու-
նաստանի Միթթօ քաղաքում եւ նուրբում էր
վանական կեանքին, որ մի առանձին բան չէր
ներկայացնում: Աղօթքները, քարոզութիւն-
ներն էին հայ վարդապետների գործը, երբ մի
նոր հայածանք եկաւ փախչելու նրանց Յու-
նաստանից եւ տարաւ Վեցեցիա: 1717 թա-
կանին ա. Ղազարի անչան ու խղճուկ կղզին
դարձաւ փախտական կրօնաւորների հայրե-
նիք: Եւ այդ ժամանակից նա հռչակվեց իրեւ
հայերի մէջ նման չունեցող մի գրական-
կրթական ընկերութեան գաղթավայր: Մի-
թարը կրօնական-քարոզչական գործունէու-
թեան միացեց զբաղմունքը գործունէութիւնը,
որ չուտով մտադնել տուցեց միաբանութեան
միւս բոլոր նպատակները եւ ճոխացաւ գա-
մանալի փարթաւութեամբ:

Այսպիսով Միթթարը սկիզբ դրեց մի նոր
դարաշրջի հայոց մտաւոր դարգացման պատ-
մութեան մէջ: Նա ինքը գրական մեծ տա-
ղանդ էր, չունէր մեծ գիտութիւն, բայց այդ
բոլորի փոխարէն ունէր երկաթե կամք, դի-
մացկանութիւն, կազմակերպողի, աշխատաւոր-

նրանց հետ կաթոլիկութեան մասին...

Ես յայտնեցի սուրբ հայրերին իմ նպատակս:
Նրանք խորհուրդ տուցին ինձ դիմել հ.
Ղեւոնդ Արշակուն, որը այն ժամանակ Բաֆա-
յէլեան դպրոցի տեսուչ էր եւ կենտրոն էր քա-
ղաքում գտնված դպրոցի շինութեան մէջ:
Քանի մի օրից յետոյ ես վարձում էի Սան-
Մարկո հրապարակում իտալացի մի ուղեւորից,
որը ոտով տարաւ ինձ նեղ եւ ոլոր մոլոր փո-
ղոցներով ու փոքրիկ կամուրջներով դէպի
Բաֆայէլեան դպրոց:

Դպրոցը գետեղված է մի լայն կանալի վրա
գտնվող շքեղ հոյակապ պալատում: Հայր տեսչի
հետ տեսակցութեան իրաւունքը խնդրած ի-
նելով, ես բարձրացայ լայն սանդուղտը, անցայ
մի քանի ընդարձակ, գեղեցիկ կորիզներ եւ
չուտով բաղնիք էի արդէն հայր Ղեւոնդի
առանձնասենեակի դուռը:

—Բաց... լսեց սենեակից մի թոյլ եւ խուլ
ձայն:

Ես բաց արի դուռը եւ իմ աչքերիս ներկա-
յացաւ հետեւեալ տեսարանը: Ահագին լուսաւոր
սենեակ, լի գրքերի պահարաններով, մէջտեղ
դրած մի մեծ գրասեղանով, որը բնականօրէն
էր բազմաթիւ գրքերով եւ թղթերով, մի քանի
գեղեցիկ, թէեւ հասարակ բաղկացումներ, եւ
մի դիվան, լայն եւ բարձր պատուհանների վրա
մոյգ գոնի վարդապետներ,—ահա Արշակի սե-
նեակը:

Առաջին րօպէին ես մարդ չէի տեսնում սե-
նեակում... Մի վայրկեան անշարժ կանգնեցի
սենեակի շէմքի վրա... Ուղղութիւն հայեացքս
դէպի անագին գրասեղանը, այդ րօպէին միայն
նկատեցի մի շատ նիհար դէմքով մարդկային
գլուխ գրքերի ու թղթերի անագին կոյտի մէջ-
տեղը:

Ինչպէս երեւում է, հայր Ղեւոնդը խորատու-
ված էր ընթերցանութեան մէջ, երբ ես ներս
մտայ:

Նա անմիջապէս տեղից բարձրացաւ, մօտե-
ցաւ, մեկնեց ինձ իր ձեռքը. եւ ձեռքիցս
բռնած՝ տարաւ ինձ իր գրասեղանի մօտ,
խնդրելով նստել:

Ես յայտնեցի, որ կուղենայի նրանից հայե-
րէն լեզուի դասերը առնելու:

—Կը ներքե, չեմ կրնար, կուրճաւ թոյլ է,
բժիշկները արգելած են ինձի շատ խօսել եւ
բարձր խօսել, բայց կը յանձնեմ ձեզ մեր
դպրոցի օգնականին, հայր Իգնատիոսին...

Ես չնորհակալութիւն յայտնեցի:

րութիւն ներշնչող անագին ընդունակութիւն:
Նա ինքը սկիզբ դրեց, հոգի ստեղծեց, աւան-
դութիւն թողեց, եւ առաջացրեց գրական ժիր
եւ մեծագործ մշակների սերունդներ, որոնք
գործում են մինչեւ այսօր:

Իրեւ վանք, իրեւ կղերանոց, Միթթա-
րեան միաբանութիւնը իր երկու հարիւր ա-
մեայ անցելու մէջ ունեցել է հակալիքի կող-
մեր, ինչպէս եւ յոյց է տուել շատ համակրելի
գործեր էլ: Բայց մենք կարող ենք եւ պիտի
մի կողմ թողնենք այդ կրօնական գործունէու-
թեան պատմութիւնը: Կայ աւելի մեծ հան-
գամանք, որ մտադնել է տալիս կաթոլիկ հայ
վարդապետների շատ գործերը եւ երախտա-
գիտութեան բուն զգացմունքը է յարուցա-
նում դէպի հայրենիքի կարկած, օտար երկրնե-
քի տակ տքնող այդ մարդիկ: Դա այն հանգա-
մանքն է, որ առանց Միթթարեան միաբանու-
թեան՝ շատ ողորմելի, շատ աղքատ կը լինէր
մեր գրականութիւնը ամբողջ երկու դարերի
ընթացքում...

III

Եւ իրաւ վերջում ենք ա. Ղազարի վան-
քում լոյս տեսած գրքերի ցուցակը, մի թուո-
յիկ հաշիւ ենք անում եւ դուրս է գալիս, որ
մինչեւ 1899 թականը այդ վանքի տպարանը
ստուել է մեզ 2200-ից աւել հատորներ, չը հաշ-
ւած աշխարհագրական քարտեզները, բազմա-
թիւ գրքերի մի քանի անգամ կրկնած հրա-
տարակութիւնները: Աւելացնենք այս թիւի վրա,
նոյն հաշիւով, եւ մօտ 700 հատոր գրքերը,
որոնք լոյս են տեսել նոյն ժամանակամիջո-

Սկսեցի չարախօսել չորս անգամ դասեր առնել տեսչի օգնական հայր Իգնատիոս Կիրեղեանի մօտ (այժմ արքայապետ)։ Հայր սուրբի խուցի մէջ նստած, Եղիշէ, Պորենացի, կամ մի այլ հայրց կրօնական գիրքը կարդալով՝ իմ դասերիցս իւրաքանչիւրը, մի ժամի տեղ, չստանալով երկու երեք ժամ էր տեսուած։ Գիրքը թողած՝ շատ անգամ սկսում էինք վիճել երիտասարդ վարժապետիս հետ։

Վէճը մեծ մասամբ եկեղեցու, կրօնի մասին էր, լուսաւորչական, կաթօլիկ եւ բողոքական եկեղեցու մասին...

—Հրամանեք բողոքական երկրում ուսուցող առաջած ըլլալով, կը նկատեմ որ աւելի համակիր էք բողոքականութեանը, ասում էր ինձ իր մեղմ եւ ներգաշնակ ձայնով համակրելի վարժապետս...

—Ոչ, հայր սուրբ, ինձ համար մի եւ նոյն է, ինչ կրօնի էլ պատկանի հայր. ես ծնվել եմ լուսաւորչական ծնողներէի ու նրանցից եմ ստացել իմ առաջին բարոյական դաստիարակութիւնը. բարձրագոյն ուսումս եւ համոզմունքս ներս՝ բողոքական Գերմանիայից եմ ստացել, իսկ հայրց, մայրնի լեզուի հմտութիւններովս պարտական կը լինեմ ձեզ, կաթօլիկ հայրերին... Գուցէ այդ պատճառով ես միակերպ եմ վերաբերվում ձեզի որոյր դասանութիւնները, առանց որ եւ է մոլեռանդ զգացմունքի...

Վարժապետս ժպտում էր իր մեղմ ժպտով, ապա յանկարծ կտրում էր մեր վիճարանութիւնը։

—Սակայն ժամանակը կանցնէ, դառնանք մեր Խորենացուն։

Ամբողջ վեց ամիս, չարախօս չորս անգամ դասերս առնելով հայր Իգնատիոսի մօտ, ես դասերիցս յետոյ կամ պտտում էի դպրոցում, կամ մանում էի հայր Ալիշանի սենեակը։

Դպրոցը ինձ հետաքրքրում էր։ Դպրոցի ամբողջ կազմակերպութեան եւ ուղղութեան վրա տիրում էր հայր տեսչի, Ալիշանի ու գինի Դպրոցն ուսումնասիրված լինելով, կարելի էր գաղափար կազմել եւ նրա ղեկավարի ուղղութեան, բնասութեան եւ լայն համամարդկային դաստիարակութեան մասին։ Ալիշանի անխաղախ, համակրելի, անկեղծ բնավորութիւնը, նրա լայն մարդասիրական եւ հայրենասիրական անձնուէր հանգարը կերպարանաւորվում էր դպրոցի թէ ամբողջութեան եւ թէ նրա իւրաքանչիւր մանրամասնութեան մէջ։

Ալիշանին միաբանութիւնը մի քանի անգամ էր առաջարկել արքայի պաշտօնը, սակայն նա երբեք չընդունեց այդ պատասխանատու պաշտօնը, նախապատելով զբաղվել իր գրքերով ու դպրոցով, գրական աշխատութիւններով ու մանկավարժութեամբ։

Բաֆայէլեան դպրոցը նրա ձեռքի տակ այնպիսի բարձրութեան էր հասել, որ համարվում էր ամբողջ Վենեցիայում ամենալաւ միջնակարգ դպրոց։ Բազմաթիւ իտալացի հարուստ ընտանիքներ խնդրում, աղաչում էին, որ դպրոցում ընդունվեն իրանց զաւակները։

Վիեննայի Միխիթարեանների տպարանից, եւ մենք կը ստանանք մի ահագին հարստութիւն, մի մեծ գրադարան, բազմապատ մօտ 3000 հատորներէի։ Միջին թուով ընդունեմք, թէ իւրաքանչիւր գրքից տպված է 500 օրինակ. այն ժամանակ զուրա կը գայ, որ Միխիթարի հիմնած գրական ընկերութիւնը տուել է մեզ, երկու հարիւր տարվայ ընթացքում, մի միլիոն հինգ հարիւր հազար գրքեր։

Այն էլ ինչ գրքեր, Հրատարակութիւնների մէջ չառն, ի հարկէ, փոքրիկ տետրակներ, բայց շատ շատ են եւ այնպիսի պատկանելի հատորներ, ինչպէս են Չապլանի «Պատմութիւնը», Հայկազեանի Բազմաթիւ, Ռոլլէնի 12 մեծ հատորները, Ալիշանի «Միտումներ», «Այրարատը», «Միւսիքը», Տաշեանի «Յուդայական քաղաքացի» եւ այլն եւ այլն։ Զը մոռանանք եւ այն գեղեցիկ աշխարհագրական քարտէզները, որոնք լայն են տեսել Վենետիկում եւ Վիեննայում. առանձին յիշատակութեան արժանի է Վիեննայի մեծ, հրաշալի երկրագունդը, որ միայն բաւական է միաբանութեան փառքը եւ պարծանքը կազմելու համար։

Բայց Միխիթարեան երկու վանքերը միայն գրքեր տպագրելով չեն բաւականացել։ Միխիթարեան վարժապետները մեղուների նման ժողովել են, կորստից ազատել են հայկական մաքի բոլոր, հին թէ նոր, արտադրութիւնները աշխարհի բոլոր կողմերից։ Այսօր նրանք ունեն գրադարաններ, որոնք իրանց հարստութեամբ առաջինն են մեզանում. կան շատ հաւաքնակ հարուստ, զարգացած կենտրոններ,

բը, սակայն միշտ մերժումն էին ստանում։ Հայր Ալիշան միշտ պատասխանում էր, որ դպրոցը միմիայն հայ զաւակները կրթութեան համար է նշանակված, առանց խտրութեան հայ ազգութեանը պատկանող աշակերտների դասանութիւններին. իմ ժամանակ կաթօլիկ աշակերտներին մեծամասնութեան մէջ կային եւ լուսաւորչական մի քանի երիտասարդներ եւ նոյն իսկ մի հայ բողոքական աշակերտ։ Անուրանալի է, որ Վենեցիայի Միխիթարեանները թունդ կաթօլիկներ են, բայց նրանք այն աստիճան լուսաւորված մարդիկ են, որ երբեք չեն փորձում որ եւ է ձնչում գործել իրանց դպրոցում ուսանող աշակերտ հայ երիտասարդներին վրա եւ դարձնել նրանց կաթօլիկ։ Եւ ես համոզված եմ, որ այդ համբերողութեան ոգու գլխաւոր դրօշակակիրը միաբանութեան եւ դպրոցի մէջ ինքն հայր Ղեւոնդն էր։

Երբ ես մտնում էի դպրոցի այն մեծ դահլիճը, որտեղ աշակերտները զբաղվում էին ներկարչութեամբ՝ ես ապշած էի մնում։ Հայր տեսչը պատուիրել էր նկարչութեան ուսուցչին, որ աշակերտները մեծ մասամբ նկարէին հայոց պատմութեան հետ սերտ կապ ունեցող եւ երեսներին վառ երեւակայութեամբ գլխաւորապէս հայրերից յիշեցնող դէմքեր եւ տեսարաններ... Մի անգամ տեսնում էիք Վարդան Մոսիկոնեանի ընդօրինակած կենդանագիրը, մի ուրիշ տեղ Անիի աւերակների տեսարանը, եւ այլն եւ այլն...

Վեց ամիս շարունակ հայր Իգնատիոսից շարաք չորս անգամ դասեր առնելուց յետոյ, երբ հասում էինք Խորենացուն, ես կրկին դիմեցի հայր Ղեւոնդ Ալիշանին, խնդրելով որ դպրոցի օգտին գնեմ ընդունեմ ինձանից դասերիս վարձը։ Բայց բոլոր թախանձանքներս զուր էին, — հայր Ղեւոնդը ոչինչ կերպով չէր ուզում ինձանից փող ընդունել։

Ծարաւատված, քաղցրից իմ դուրս գալուց մի քանի օր առաջ, գնեցի գրաւաճառանոցում ֆրանսիական կլաւիկների ժողովածուն եւ ընծայեցի Բաֆայէլեան դպրոցի գրադարանին, որպէս զի գոնէ մի կերպ արտայայտեմ իմ երախտագրութեանս սուրբ հայրերին նրանց սիրովոր ընդունելութեան, հիւրասիրութեան եւ վեց ամիս շարունակ ինձ առեւ դասերի համար։

Հայր Ալիշանի հետ վեց ամսվայ ընթացքում բաւական մօտիկ ծանօթութիւն կապելով, ես մի մի անգամ ասիթ էի ունենում նրա հետ մտերմաբար խօսել ընդհանրապէս մեզ հետաքրքրող հարցերի մասին։

Անկապած Ալիշանի հետ խօսողը կը համոզվի, որ նա կաթօլիկութիւնից դուրս հայոց ազգի համար փրկութիւն չէ տեսնում։ Բայց անկողմնապաշտ համբերող ժամանակակից ոգի ունեցող մարդը շատ լաւ գիտէ, որ եւ լուսաւորչական հայր լուսաւորչական եկեղեցից դուրս հայրերի համար ոչինչ փրկութիւն չէ տեսնում, իսկ բողոքականը բողոքականութիւնից դուրս փրկութիւն չէ տեսնում։

Ուրեմն թող ամեն մարդ ունենայ այդ համոզմունքները եւ թող մի եւ նոյն ժամանակ

բայց այսօր ուր կարող ենք գտնել հայերէն գրքերի լիակատար հաւաքածոն — Միայն Միխիթարեանների մօտ, գրքերի սիրահար, գրքերով ապրող այդ վարժապետների մօտ, որոնք աշխատում են օր ու գիշեր, սերունդից սերունդ կտակելով իրանց այդ սերը, անխնայ աշխատասիրութիւնը, չարաքնութիւնը յօգուտ հայ ազգի։ Ներկայումս Վիեննայի Միխիթարեան վանքը յայտել է մի յանդուգն միտք — ձեռք բերել բոլոր հայերէն տպագրութիւնները, սկսած XVI դարից մինչեւ մեր օրերը։ Եւ այդ միտքը իրագործելու վրա է ոչ թէ չնորհիւ հարստութեան, որից գուրկ է միաբանութիւնը, այլ չնորհիւ տուրման, յաւաք աշխատութիւնների։

Պարզ է, որ այսպիսի վիթխարի հրատարակչական գործունէութիւնը կապված պիտի լինի տպարանական արուեստի զարգացման հետ։ Այսօր Միխիթարեան երկու վանքերը ունեն առաջնակարգ, հարուստ տպարաններ։ Վիեննայի տպարանը մի ամբողջ մեծ հիմնարկութիւն է, որ, ինչպէս ասում են, Աւստրիայի պետական տպարանից յետոյ առաջին տեղն է բռնում։ Բայց նա ամբողջապէս հայերէն տպագրութիւններին չէ նուիրված. այդ կողմից աւելի շատ հայկական է, աւելի շատ երախտաւոր է Վիեննայի ինչպիսիւր տպարանը, որ նոյնպէս փայլում է իր շքեղ տպագրութիւններով։

Գրականութեան հետ Միխիթարեանները անբաժան պահել են եւ դպրոցական գործունէութիւնը։ Այդ կողմից էլ աւելի նշանաւոր են հանդիսացել վենետիկները, որոնց ձեռ-

Ալիշանի պէս պայծառ, լայն, ընդհանրապէս մարդասէր գաղափարներ ունենայ, նրա չափ հայրենասիրութիւնն ունենայ, — եւ այն ժամանակ անձնական հայեացքները իւրաքանչիւր դասանութեանը պատկանողի կողմից՝ ոչինչ վտանգ չեն ներկայացնի ընդհանրութեան համար, ոչինչ երկպառակութեան սերմեր չեն գցի տարբեր կրօնական հայեացքներ ունեցող մարդկանց մէջ, երբ նրանք այդ հայեացքներից բարձր կը դասեն ընդհանրապէս ազգը սիրելու զգացմունքը։

Այդ տեսակ լայն հայեացք մենք կարող ենք տեսնել Վենեցիայի Միխիթարեաններից, մանաւանդ Ալիշանի պէս համոզված մարդուց։ Կարելի է Ալիշանի պէս ջերմ, նայն իսկ մոլեռանդ կերպով սիրել իր կրօնը, բայց մի եւ նոյն ժամանակ պէտք է Ալիշանից օրինակ առնել թէ դէպի ուրիշ դասանութիւնները նրա ունեցած լայն համբերողութեան ոգուց եւ թէ հայրենասիրութեան նրա անսահման եւ անձնուէր զգացմունքից...

ԳՐԻՖՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐՖԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» խմբագրութիւնը ուղարկեց Վենետիկ ու Ղազարի վանքը մի հեռագիր հետեւեալ բովանդակութեամբ։ «Մշակի» խմբագրութիւնը, բարձր գնահատելով Միխիթարեան Միաբանութեան մատուցած անուրանալի կարեւոր ծառայութիւնը հայ գրականութեան ասպարէզում, շնորհաւորում է նրա երկհարկաւոր գոյութեան եւ գործունէութեան յօգեւանը, ցանկանալով նրան յարատեւութիւն եւ աւելի եւս ընդարձակ բարգաւաճում ապագայում։

Մեզ հաղորդում են, որ կովկասեան ցուցահանդէսի բաժինները արագ կերպով լցվում են եւ առաջիկայ շաբաթվայ ընթացքում վերջնականապէս կարգի կը բերվեն։ Ցուցահանդէսի շինութիւնների մէջ հիւսնային գործերը վերջացել են։ Բաժինների շուտ պատրաստվելուն խանգարում են օտար քաղաքներից ուղևորացած իրերը։

Կովկասեան սիւնիստների համաժողովի նիստերը զարգարեցած են, որովհետեւ այն հարցերի ծրագրերը, որոնք ենթարկված էին համաժողովի քննութեան, չէր հաստատված օրինական կարգով։

Պետերբուրգում, մի անտառի մէջ ձեռնդրեցութեամբ, կազմակերպվում է հանրամատչելի բժշկական օգնութիւն բնակարաններ վարձողների համար։ Իւրաքանչիւր բնակարան վարձող պէտք է աւելացնէ իր ամսական վճարի վրա 1—1½%, որով իրաւունք կը ստանայ հիւանդութեան դէպքերում միշտ, թէ ցերեկ եւ թէ գիշերը, պահանջել իր բնակարանը բժշկի, առանց որ եւ է վարձատրութեան։ Իւրաքանչիւր տան մէջ, որ պատկանելիս կը լինի կաղ-

բին գտնվող Մուրադեան եւ Ռաֆայէլեան վարժարանները մի ժամանակ մեծ ծառայութիւններ են մատուցել հայ ազգին։ Այժմ էլ Թիւրքիայի զանազան կողմերում գոյութիւն ունեն Միխիթարեան դպրոցներ։

IV

Անհնարին է, ի հարկէ, մի փոքրիկ յօդուածում պատկերացնել Միխիթարեան միաբանութեան գրական ամբողջ հսկայական գործունէութիւնը։ Բաւականանանք միայն ընդհանուր գծերով, խոշոր երեւոյթներով ու անուններով։ Իրեւն մի վանական ընկերութիւն, միաբանութիւնը, բնական է, իր ուշադրութեան աւանանք մասը դարձրել է կրօնական հարցերի վրա, ուստի եւ նրա հրատարակութիւնների մեծ մասը կրօնական բովանդակութիւն ունի։ Բայց Միխիթարեանները զգում էին եւ այն, որ ուրիշ պարտաւորութիւններ էլ ունեն դէպի հայ ազգը։ Նրանք էին ազգի առաջաւոր մասը, նրանք ձեռնուէին որ ազգի դաստիարակութիւնը եւ նրանք, բայց հոգու փրկութեան մասին մտածելով, ժամանակ եւ կարողութիւն ունէին հոգալու նաեւ աշխարհային կարիքները։ Այդ պատճառով նրանք երկար ժամանակ միակ կարող եւ հեղինակաւոր միջնորդներ էին մեր եւ եւրօպական գիտութեան մէջ։

Միխիթարեանները անուն են ստացել թէ իրեն ինքնուրոյն գործներ, թէ իրեն թարգմանիչներ։ Գրական ինքնուրոյն գործունէութեան մէջ ընդարձակ ասպարէզ տալիս էր նրանց հայագիտութիւնը. այս բառի տակ մենք պիտի հասկանանք հայկական պատմութիւնը,

մակերպվող ընկերութեան անդամներից մէկին կամ միւսին, կապի մի բժիշկ։

Թիֆլիսում վերջին օրերը եղանակը տաքացել է. սակայն գիշերները օդը ցրտում է եւ այդպիսով մեղմացնում ցերեկվայ տաքութիւնը։

Թիֆլիսի կոնտրոլի ատենը (КОНТРОЛЬНАЯ ПАЛАТА) որոշել է յօգուտ արքունի գանձարանի 500 ռուբլի պահանջել Թիֆլիսի քաղաքագլուխ Եւանդուլովից՝ նրան պաշտօնի մէջ հաստատելու համար, քաղաքային վարչութեան անդամ Մ. Շչետաւովից, նոյն վարչութեան նախկին անդամ իշխան Ա. Արդուտինսկի-Դուգորուկովից, նոյն բանի համար, — 375-ական ռուբլի, որպէս քաղաքագլխի պաշտօնակատարներից, վարչութեան անդամ իշխան Չէրէշովից եւ նոյն վարչութեան նախկին անդամ Վէրմիշովից — 250-ական ռուբլի եւ քաղաքային խորհրդի քարտուղար Պրեկաւովից — 100 ռուբլի, ընդամենը կոնտրոլի ատենի հաշուով վերոյիշեալ անձերից պէտք է պահանջվի 1850 ռուբլի։

«Тяфл. Листокъ» լրագրին հեռագրում են Ղազարից, թէ հիւնդաթի, օգոստոսի 23-ին, երեկոյան ժամի 8-ին, Ուղունթալա եւ Գարվանսարայ կայարանների մէջ տեղում զինված չարագործներ կողոպտեցին օմիլիոնով գնացող ճանապարհորդներին։

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, թէ մայրաքաղաքի պօստային գլխաւոր շինութեան մէջ, ցերեկով, զրաւանկան ծրարները կշեռու ժամանակ, գողացված է 50,000 ռուբլու մի ծրար, որ պետական բանկը ուղարկում էր իր գաւառական բաւանդներէից մէկին։ Հաստատված է, որ զրաւանկան ծրարները կշեռու ժամանակ, պօստային գլխաւոր շինութեան զրաւանկան բաւանդները մտնում է մի անձնաթի մարդ, պօստային վարչութեան համազգեստ հագած, որ մնում է այնտեղ երկար ժամանակ առանց կապած յարուցանելու, թէ ի՛նչ պատկանում պօստային ծառայողների թէին։ Պօստային գլխաւոր շինութեան մէջ ծառայում են մօտ 800 հոգի եւ, ի հարկէ, շատերը միմեանց չեն ճանաչում։ Պետերբուրգի օստիկանութեան բոլոր ջանքերը՝ գտնելու այդ յանդուգն գողին, առ այժմ ասպարէզին են մնում։

Կարճ ժամանակից յետոյ Պետերբուրգում կը բացվի օստաւնարութեան մի նոր ինստիտուտ, որի մէջ կուսանեն բացառապէս կանայք։ Ինստիտուտի շինութիւնը գտնվում է Վասիլեւսկի կղզու վրա։ Նրա հիմնադիրը մի կին — բժիշկ է։

ՂՈՒՐԱՍԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 19-ին, տեղիս սիրողները տուին երկրորդ ներկայացումը։ «Исторія одного увлеченія» պիէսը, Ա. Նալաուսկիի մեծ դահլիճում, որը բազմութիւն շատ էր գրաւել։

Հնագիտութիւնը, լեզուագիտութիւնը եւ բազմաթիւ պատմաութիւն գործեր գեղեցիկ յաշարձաններ են, թէ ինչպէս շատ ու մեծ բան են արել նրանք այս ասպարէզում։ Չափեանի պատմութիւնը, քերականութիւնը, Ինձիեանի հնագիտական եւ աշխարհագրական աշխատութիւնները, երեք վարժապետների կազմած աւարդէմիական մեծ բառարանը, Բազմատունու Ալաւանանի եւ միւսների կազմած քերականութիւնները, Ալիշանի տեղագրական վիթխարի գործերը՝ անազնի դեր են խաղացել մեղաւնում եւ դեռ երկար կը խաղան, քանի որ լուսաւորները չը կան։

Հայագիտութիւնից դուրս Միխիթարեանները շատ են ծաղկել նաեւ բանաստեղծութիւնը, այդ ճիւղում նշանաւոր են Բազմատունին, Հիւրմիւլը իրեն կեղծ-կլաւիկական բանաստեղծութեան ներկայացուցիչներ եւ Ալիշան, որ մեր աշխարհագրական բանաստեղծութեան եւ գլխաւորապէս հայրենասիրական բանաստեղծութեան նախահայրն է։ Հայրունիքի անունով հատորիկի մէջ ամփոփված օտանաւորները շատ շատերի համար նմանողութեան առարկայ են դարձել, կրթել են սերունդներ. իսկ արձակ բանաստեղծութեան գեղեցիկ նմուշներ տուել է նա իր «Յուշիկը» անունով երկու հատորներով մէջ։

Գիտութեան զանազան ճիւղերը հայերին ծանօթացնելու գործի մէջ էլ Միխիթարեանները առաջինն էին, արդիւնաւոր գործունէութիւն ցոյց տուին։ Նրանք էին, որ գիտական տերմիններ ստեղծեցին մեզ համար, նրանք

Մուտք եղաւ 146 բուրձի, որից ծախսը դուրս գալով մնացածը յատկացրին յօգուտ նորաբաց հիւանդանոցի: Խաղաղօղնորի մէջ աչքի էին ընկնում Ե. Արթուրովան, Հ. Թաթևան, Թ. Ե. Ն. Ստառուսեաններ եւ Ա. Աթանասեանս:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—«Daily News» լրագրի նման, «Times»-ն եւս տպագրել է մի նամակ, որի մէջ ապացուցանւում է, թէ անհնար է մի այնպիսի դաշնադրութիւն կապել Գերմանիայի եւ Անգլիայի մէջ, որ ուղղված լինէր Ռուսաստանի դէմ: Յօդուածագիրը աշխատում է համոզել իր հայրենակից անգլիացիներին, որ անկուսայի մի բան է՝ զինդրութիւններ անելով Գերմանիային: Գրողը նրան միաբան գործելու Անգլիայի հետ թէ հեռուաւոր Արեւելքում եւ թէ աշխարհիս որ եւ է այլ տեղում, եթէ միայն ամենափոքր կասկած կայ, թէ դրանով կը վտանգվեն Ռուսաստանի շահերը: «Գերմանական քաղաքականութեան հիմնական սկզբունքը,—ասում է յօդուածագիրը,—հիմա էլ մնացել է նոյնը, ինչ որ Բիսմարկի ժամանակ, որ իր գլխավոր գործին էր համարում բարեկամական յարաբերութիւններ պահպանել Ռուսաստանի հետ: Որովհետեւ յաճախ մեր չափերը չեն համապատասխանում Ռուսաստանի նպատակներին, ուստի մենք անպայման պէտք է յոյս դնենք միայն մեր ոյժերի վրա: Բնորոշվում ապարդիւն բան է օգնութիւն սպասել Բեռլինից: Յոյս դնելով նրա վրա, մենք միայն գործում ենք յօգուտ անգլիական միջնորդների, որոնք, բնական է, շատ մեծ ախորժակ ունեն խելու մեր ձեռքից հա՛նախարհային վտանգանոցի այս եւ այն ցանկալի անկիւնները:

—Պարզի թիւթական դեպքանատան մէջ, ինչպէս հաղորդում են ֆրանսական լրագրիները, մտադրութիւն կար օգոստոսի 18-ին տօնել սուլթանի գահակալութեան տարեդարձը, բայց հէջի իրաւունքով տօնակատարութիւնը չը կայացաւ, որովհետեւ ֆրանսիական զինուորական միջնորդ Անդրէ արգելեց նուազել ֆրանսիական այն երաժշտական խումբին, որ արդէ հրաւիրված էր թիւթական դեպքանատան:

—«Pall Mall Gazette» լրագրի ասելով, լորդ Սոլսբերի լուրջ կերպով մտածում է հեռանալ քաղաքական ապարդիւնից, նա, երեւի, պաշտօնը կը թողնի Էդուարդ VII-ի թագադրութիւնից յետոյ: Քաղաքական ապարդիւնը նրա հեռանալու հետեւն էր այն իրեն, որ մի-նիստութեան կազմը փոփոխութիւնների կենթարկվել: Որովհետեւ ունիտարիական կուսակցութիւնը կամենում է, որ ժողովրդի առաջին միջնորդը լինի մի եւ նոյն ժամանակ եւ նրա ներկայացուցիչը համայնքների ժողովում, ուստի, հաւանական է, որ Սոլսբերի յաջորդը կը լինի Բալֆուր:

—«Verité Française» լրագրի ասելով, գերմանական կայսր Վիլհելմ II առաջարկեց Ստրասբուրգի եւ Մեցի եպիսկոպոսներին՝ թոյլ չը տալ ֆրանսիական կրօնական միաբանութիւններին դադրել Էլզաս կամ Լօթարինգիս: Հրապարակվում այս արգելքը, գերմանական կառավարութիւնը զիջակարարում էր իբր թէ ֆրանսիական կառավարութեանը հաճոյանալու բացառիկ ցանկութեամբ: Արգելքը չէ բերում ոչ Գերմանիային մի թշնամի տարր երկրի մէջ ներս թողնելու երկիւղից եւ ոչ թըշ-

էին, որ առաջին անգամ տուին մեզ հայերին թուաբանութիւն, երկրպագութիւն, եւ ունիւնեցաւ փոփոխութիւն, ալքերա առողաբաշխութիւն, բնագիտութիւն, կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, հանքաբանութիւն, օդերեւոյթաբանութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, ընդհանուր պատմութիւն, քաղաքական անտեսութիւն, ստատիստիկա, գիւղատնտեսութիւն, արհեստագիտութիւն, հաշուապահութիւն, վաճառականական գիտելիքներ եւ այլն: Այդ կողմից արդիւնաւոր եւ բազմակողմանի է եղել մանաւանդ Վիեննայի Միութեանների գործունէութիւնը:

Օտար լեզուների հետ ծանօթացնելու գործում էլ ոչ ոք Միութեանների չափ չէ աշխատել: Նրանք կազմել են բազմաթիւ օտար լեզուների (ֆրանսիական, անգլիական, գերմանական, իտալական, ռուսական, ունգարական, թիւթական, լատինական) լեզուականութիւններ եւ մանաւանդ մանրամասն բառարաններ: Նշանաւոր է Գալուստ Բառգրիք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց աշխատութիւնը, երկու մեծ հոտոր: Հայերէն գրուածքներ, գլխավորապէս ներքից, թարգմանվել են եւրոպական լեզուներով:

Շատ մեծ տեղ են ընդունում Միութեանների թարգմանութիւնները օտար լեզուներից: Նշանաւոր են մանաւանդ յունական եւ հռոմէական կուսակների (Հոմերոս, Թուկիդիդէս, Գիսեոֆոն, Եւրիպիդէս, Վիրգիլիոս, Տակիտոս, Կիկերոն, Սեւերոս Կեսար, Սուրբաթոս, Սենեկա եւ այլն) թարգմանութիւնները. այս ճիւղում

նամական զգալիորեն զգալի արտաքսվող միաբանութիւնները:

ԽՈՒՆ ԼՈՒՐԻՐ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր

Այսօր յօդուածական օր է: Այսօր, օգոստոսի 26-ին, տօնվում է Միութեանների միաբանութեան գոյութեան երկուս արեւմտեան կը:

Այդ տօնը արձադնւել կը գտնէ հայ մարդու արտում աշխարհիս զանազան մասերում: Ինչպէս, հարցնում եմ ես, ինչպէս մի կ'օնական միաբանութեան յօդուածական պէտք է այդքան ընդարձակ հետաքրքրութիւն առաջ բերէ, մանաւանդ երբ համակողմանի եւ յարգողների մեծամասնութիւնը նոյն իսկ չէ պատկանում այն կրօնին, որ դաւանում է միաբանութիւնը:

Ահա հէջը այդտեղ է Միութեանների միաբանութեան գրաւած յատուկ դիրքի, խորհրդաւորութիւնը եւ նրա պատմական նշանակութիւնը:

Հէջը բան էլ այն է, որ կրօնը չէ եղել այդքան զգալի դեր կատարողը: Ընդհակառակը՝ այն, ինչ եղել է դաւանաբանական, կրօնական, նա առիթ է տուել թիւթականութիւնների եւ ստույգիւնների:

Մանաւանդ, որ իր գոյութեան առաջին դարում, երբ միաբանութիւնը նոր էր սկսել իր գործունէութիւնը եւ մասամբ երկրորդ դարում, կրօնական խորութեան հարցերը առանձին սուր կերպարանք ունէին հայերի մէջ:

Ձը նայելով ասկայն կրօնական հալածանքութիւններից եւ մեկնաբանութիւններից առաջ եկած թիւթականութիւններին՝ Միութեաններից հրաւերներն հայ մարդու սիրտը եւ այսօր վայելում են նրա անկեղծ յարգանքը եւ համակրութիւնը:

Իրական դեր կատարողները եղել են այն ուսումնական ոգին, այն բանասիրական շահագրգռութիւնը, այն ակադէմիական լուրջ աշխատանքը, որոնցով հանդէս է եկել բազմակարգ միաբանական հայրենիքը հայ գրականութեան մշակութեան ապարդիւնը:

Միութեաններից յաջորդ հանդիսացան չնորհիւ այն աշխարհական տարրի, որ եղել է նրանց երկարամեջ գործունէութեան մէջ: Նրանք ոգւով աշխարհական են եղել, երբ տուել են մեզ մեր երկրի նկարագրութիւնը եւ հնարարական ու կենցաղավարական հետազոտութիւնները:

Նրանք աշխարհական են եղել, երբ արտառուցել են մեր մասնաշաղկապներին:

Նրանք աշխարհական են եղել, երբ տուել են մեզ յունական եւ հռոմէական կուսակների եւ եւրոպական հեղինակների թարգմանութիւնները:

Նրանք աշխարհական են եղել երբ կազմել են թարգմանութիւններ, բառարաններ եւ քաղաքական:

Նրանք աշխարհական են եղել, երբ ներկայացրել են մեր առաջ հայագիտութեան նորագոյն արդիւնները:

Նրանք աշխարհական են եղել, երբ եւրօպացիների առաջ հանդէս են հանել հայ տարրի պատմութեան եւ նրա մասաւոր ստեղծագործութեան արդիւնները:

Երկու հարիւր տարի շարունակվող անձնուէր գործունէութիւն, անսպառ եւ անհուն ոգեւորութիւն զգալի գաղափարական գործը, անխնայ եւ տոկուն աշխատանք—անա ինչ

անուն են հանել մանաւանդ թովման, Բազմաբան, Հիւրմիւլ, Գաթրեան:

Աչքից թողնել չէ կարելի եւ Միութեանների դասագրքերը: Վենետիկում եւ Վիեննայում հրատարակված են բազմաթիւ դասագրքեր: Գիտութեան զանազան ճիւղերին վերաբերված Ուշադրութեան արժանի են ընդհանուր եւ հայոց պատմութեան դասագրքերը, որոնցից մի գտնիք բաւական ընդարձակ եւ մանրամասն են, կարող են օգտակար լինել եւ զբոսայգիներից դուրս: Չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ ընդհանուր պատմութիւնը միայն Միութեանների են տուել մեզ Միւնչենի այժմ ոչ ոք չէ կարողացել նրանց չափ գործ տեսնել այս ճիւղի մէջ: Յատկապէս մենք պէտք է յիշատակենք Հ. Չարբանալեանի կազմած դասագրքերը, որոնք վերաբերում են հայոց եւ ընդհանուր գրականութեան պատմութեան: Դրանք անուանված են դասագրքեր, բայց մեր ամբողջ գրականութեան մէջ չէ կարելի գտնել այդ նիւթին նուիրված ուրիշ աշխատութիւն, այնպէս որ այդ դասագրքերն են մնում միակ միջոց գրականութեան պատմութեան հետ ծանօթանալու համար:

Միութեանների գրական գործունէութեան թոյլ կողմերն էլ շատ են, բայց դրանց մէջ ամենից շատ աչքի ընկնողն այն է, որ այդ գրականութիւնը չը կարողացաւ առաջաւոր լինել զնալ ժամանակի պահանջների հետ եւ ազգի ժողովրդական մասաների վրա: Այդ երեւոյթի պատճառները շատ են. վանական առանձնու-

յատկանիւններով պատկանելի հիմնարկութիւնը գործեց հայ մատենագրութեան բեմի վրա: Ահա ինչ տեսակ յօդուածի առաջ ենք մենք կանգնած այսօր:

Ինչ սարսափելի ժամանակներ էին, երբ Միութեանների միաբանութիւնը սկսեց իր գործունէութիւնը:

Երկու հարիւր տարի առաջ:

Յիշեցէ՛ք:

Ազգի շարժը բարբարոսութիւն եւ բռնութիւն: Իսկ ազգի մէջ ոյժերի թուլութիւն, աղիւսութիւն եւ երկպառակութիւն:

Մայր երկրի մէջ Միութեանների միաբանութիւնը չէր կարող գոյութիւն ունենալ այն ժամանակ թէ արտաքին եւ թէ ներքին պատճառներով:

Այդպիսի մի հիմնարկութեան գոյութեան եւ բարգաւաճման համար աննպաստ էին թիւթական եւ Պարսկաստանը, որոնց հպատակութեան տակ ապրում էին այն ժամանակ հայերը, աննպաստ էր եւ ինքը հայութիւնը:

Այն, ինչ որ պակաս էր թողնում արտաքին թշնամին, լրացնում էր ներքին, ընտանեկան, հայրենի աղիւսութիւնը:

Կարող էր արդեօք այն ժամանակվայ Էջմիածինը մարտն մի գիտնական միաբանութեան գործունէութիւն: Արդեօք նա կը նպաստէր, կ'օգնէր, կ'աջակցէր այդ գործունէութեանը:

Պատասխանը դուք գիտե՛ք:

Տիւրքի է պատասխանը:

Ցաւ է խոստովանել, որ նոյն իսկ այժմ, երկու հարիւր տարի, երկու ամբողջ դար անցնելուց յետոյ, մենք վստահութիւն չունենք Էջմիածնի եւ Էջմիածնականների վրա:

Մի օրպէս դիմենք ենթադրութիւնների:

Եթէ մեզինք կախված լինէր տեղափոխելու Միութեանների միաբանութիւնը Վաղարշապատ կամ Սեւան, կամ հաստատել այդտեղում մի նոր նոյնատեսակ հիմնարկութիւն, ինչ կը շահէինք մենք:

Միթէ մենք չենք զգում, որ այդ հիմնարկութիւնների գործունէութիւնը վտանգի ենթարկվել է ինչեղծիք:

Միթէ մենք չենք տեսնում, թէ ինչպէս մեր օրով մեր ոչ միայն հնաւանդ, այլ եւ իբր նորագոյն արեւմտեան—միայն մի ձեւով գործել գիտենք միմեանց դէմ որոգայթներ լարել, արածք քանդել-փշագնել եւ անձնական հարցեր առաջ տանել:

Մեր աչքերը ջուր կարմեցին, ինչպէս ժողովուրդը ասում է, սպասելով, որ Վաղարշապատն էլ մի օր յիշեցնէ մեզ Միութեանների իր գործունէութեամբ:

Իսկ երկուստեք արտաքին օրանից առաջ Միութեանների փորձերից, չարարանքներից, հալածանքներից եւ զրկանքներից յետոյ ապաստան գտաւ օտար երկրում:

Այս անգամ մտածե՛ք ճիշդ չը հանգաւ եւ ազատվել իր նախորդների ազդարար լիճակից:

Երկու դարից հայ երկրի վրա բռնացել էր վայրենիութիւնը: Ահեղ շատարիւնով անցնում էին վայրենի հրոսակների արշաւանքները, խորտակելով եւ կործանելով ամեն բան, ինչ որ կրում էր շինարարութեան կնիք, լոյսի նշոյլ եւ մտաւոր կեանքի շունչ:

Բայց լոյսի կ'օրօտը եւ մտաւոր կեանքի տենչը իսպառ չէին անհետանում հայ ժողո-

թիւնը հեռու երկրների տակ, կեցրական աւանդութիւնները, կրթութեան կեղծ-կատակական, վանական գաղափարները, պահպանողականութիւնը, հնախորդութիւնը,—արանք բոլորն էլ ազգել են Միութեանների վրա: Մի մեծ պատճառն էլ այն է, որ Միութեանների գործն էին գրաւել լեզուով: Գրաբարի մշակման արած մէջ նրանց արած ծառայութիւնները անգնահատելի են: Բայց եւ այդպէս, կար այն հանգամանքը, որ ժողովուրդը չէր հասկանում այդ լեզուն, ժամանակը պահանջում էր աշխարհաբար լեզուն մտնել, զբաղվել ժողովրդի առօրեայ կեանքով, քննել ու լուծել ժամանակակից հարցեր: Միութեաններից այդ պահանջի վրա մեծ ուշադրութիւն չը դարձրին, ընդհակառակն, աշխատում էին զիմարել նրան:

Բայց ժամանակը իրանն արաւ: Ոչ միայն լեզուն, այլ եւ գրական ուղղութիւնը փոփոխելու հարկին չը կարողացան դիմադրել նոյն իսկ Միութեանները իրանց աւանդապաշտութեամբ: Վաղուց է անցել այն ժամանակը, երբ միայն գրաբար խօսքն էր հնչում ս. Ղազարի վանքից: Այժմ համարեա ամենքը աշխարհաբար են գրում: Բայց դրանք Միութեանների նոր սերունդը, այժմեան երիտասարդ վարդապետները, հասկացել են ժամանակի ոգին. նրանց ամապրելը սկսել են խօսել օրվայ շար ու բարբի մասին, հրապարակախօսութիւնը, գեղարուեստը, ընդհանուր շօթիւնում են կենսական հարցեր:

Մենք կարող ենք ասել, որ Միութեան

վրդի հոգու խորքերից: Այդ կարօտը եւ տենչը ապրում էին: Ապրում էր ժողովրդական լուսաւորութեան կայծը, ապրում էր ծարաւը զգալի մտաւոր զարգացումը:

Երբ վայրենի արշաւանքներից եւ բռնակալական արհաւիրքներից երկրորդ հանգստանում էր եւ ժողովուրդը շունչ էր առնում, նորից խօսում էին եւ գործում կարօտը զգալի լոյսը եւ տենչը զգալի միաբան:

Նորից սկսվում էր ստեղծագործական աշխատանք, մինչեւ նոր աւերած:

Եւ այդպէս դարեր շարունակ: Դժուար էր մասաւոր կեանքի միջնորդը: Ուսուցանողները օրից օր պակասում էին եւ անհետանում:

Գրեցրը յրված էին եւ թագաւոր, իսկ շատ անգ ռոյնացրած, աւարի, աւերի եւ կրակի մատնված:

Ուր ցնայ, ուր օրոնել:

Շատ տեղ մնացել էին միայն վերջին, եղաւի օրինակները, որոնց անհետանալուց յետոյ կորչում էր ամբողջ հեղինակութեան հետքը առ միշտ:

Մենք մեր օրերում, երբ գիրքը հարիւրաւոր եւ հազարաւոր օրինակներով է լցւած տեսնում, չենք կարողանում շատ անգամ պահպանել նրան վերջնական կորստից: Եւ միթէ մեր ապագայական երկաթիւններից շատերը այժմ չեն դարձել հաղուսագիտ իրեր, որոնք նմուշի համար անգամ չեն ճարվում:

Այն ժամանակ գրութիւնը բոլորովին վատ էր: Միութեանների միաբանութիւնը եկաւ ժողովուրդը եղածը եւ նրան ազատելու կորուստից:

Նա սկսեց մի շարք տպագրութիւններ:

Մի օրինակը դարձրեց հարիւրաւոր եւ հազարաւոր: Աւերումների եւ քայքայումների դէմ նա սկսեց գործել տպագրական մասնաւորով:

Միութեանների միաբանութեան ամենամեծ ոյժը, ամենախոյոր եւ ամենաազդեցիկ բազմակարգ տպագրական մասնաւոր էր:

Առանց մամուլի այդ միաբանութիւնը կը լինէր ինքն ըստ ինքեան մի օգտաւէտ հիմնարկութիւն, որ կուենար շատ մասնաւոր ազդեցութիւն:

Տպագրական մամուլով նա դարձաւ հսկայ: Մամուլի միջոցով նա մօտեցաւ հայ ժողովրդին:

Վենետիկը իր գործերով այլ եւս հեռու թուալիս մի քաղաք չէր, Արդիական ծովի ծոցում մեկուսացած մի մենաստան չէր: Նա ապրում էր հայ ազգաբնակչութեան մէջ, նա մօտեցել էր հայ քաղաքացու եւ հայ գրադէտի սենեակներին: Նա ինքն էր եկել մեզ մօտ եւ այլ եւս հարկաւոր չէր, որ մենք նրա մօտ գնայինք:

Փոխվեցին ժամանակները եւ այժմ հայ ժողովուրդն ինքն բազմաթիւ միջոցներ է գտել իր մասաւոր պարագայում համար: Նա սկսել է մասսային գործունէութիւն եւ ինքն է լսակում իր կենսական հարցերը: Միութեանների միաբանութիւնը ներկայումս նրա մասաւոր գործադարութեան արտայայտութիւններից միայն մէկն է:

Բայց հայ մարդը երբեք չի մոռնալ իր նախնիքն ուսուցիչներին, իր համար ճանապարհ հարթողներին, իր գրական առաջադիմութեան կարապետներին, իր անխնայ արշաւանքներին, իր անձուէր եղբայրակիցներին:

Հայ ազգը պարծնել է եւ կարող է պարծենալ Միութեաններից:

Արժանի են:

Վրձին

միաբանութիւնը իր երկու հարիւրամեակի յօբելանսի հետ սկսում է մի նոր շրջան, դասական գործունէութեան մի էվօլյուցիա է ցոյց տալիս: Եւ մենք մերում ենք հաւատալ, որ այսուհետեւ Միութեանների վանքերին յատուկ աշխատասիրութիւնը, տոկուն ու յամառ գործունէութիւնը միացած կը լինի աւելի լաւ, օգտաւէտ, ժամանակի ոգուն եւ ժողովրդի պահանջներին աւելի լաւ համապատասխանող մի գրականութեան հետ, որ աւելի եւս կը ժողովրդականացնէ այդ անխնայ մշակների անունը, աւելի մեծ համակրանքով եւ նիւթական ու բարոյական աջակցութեամբ կը շրջապատէ Միութեանի հոգակաւոր հիմնարկութիւնը:

Պէտք է ասել, որ Միութեանների համար գրական այդքան մեծ հոգալ ստեղծողները համեմատաբար շատ մեծ թիւ չեն կազմում: Երկու հարիւր տարիների ընթացքում Վենետիկի միաբանութիւնը ունեցել է 277 անդամներ: Այդ թիւից միայն 90 հոգի, այսինքն միայն 1/3 մասը, պարապել են գրականութեամբ:

90 հոգի երկու դարի ընթացքում, եւ այդքան մեծ արդիւնք, այդքան հոգալ: Միթէ այսուհետեւ չեն գտնվի հարկները, որոնք պատու ու փառքով առաջ տանեն միաբանութեանը զրօշակը աւելի մեծ աջակցութեամբ:

Պէտք է յուսաւ...

Եւ մենք այս յօդուածի օրը ինչ կարող ենք ցանկալ Միութեանների միաբանութեան:

—Յայտնուելութիւն, լոյս, առաջադիմութիւն:

Լէօ

